**Հրաշալի աշխարհի վերջը** (2015)
**84 ր**

**Տարիքային սահմանափակում՝** 16 տ.

***Ռեժիսոր՝ Դայգո Մացուի***
***Դերերում՝ Ջուն Աոնամի, Այ Հաշիմոտո, Յու Ինաբա***

 

(C)2014 avex music creative inc.

*«Տղաները չեն կարող փրկել մեզ: Աղջկան կարող է փրկել միայն աղջիկը:»*

17-ամյա Ծիորին ձգտում է մոդել դառնալ: Նա ոգեշնչում է իր 12-ամյա երկրպագու Այումիին, ով տանից փախել է: Ծիորին զբաղված է իրեն TwitCasting-ով (առցանց սելֆի վիդեոներ տարածելու կայք) հեռարձակելով: Նա, իհարկե, Թվիթթերում նույնպես կա: Ծիորին մտերմանում է Այումիի հետ՝ տեսնելով, որ իր երիտասարդ և ամաչկոտ երկրպագուն միշտ աջակցել է իրեն: Բայց մի անգամ նա Այումիին ծանոթացնում է իր «ուղիղ եթերային» ընկեր Կավաշիմայի հետ՝ երբևէ չմտածելով, որ Այումին կսկսի ապրել իրենց հետ: Կավաշիման կարծում է, թե ինքը հերոս է խաղում, իսկ Ծիորին որոշում է հեռանալ բնակարանից՝ չկարողանալով նրան ասել իր զգացմունքների մասին: Գնալու տեղ չունենալով՝ Ծիորին ապաստանում է «մանգա սրճարանի» մասնավոր տաղավարում, որտեղ իր ժամանակն անցկացնում է խառը ապրումներով: Այնտեղ նա սկսում է «փնտրել» Այումիին և հայտնաբերում է, որ վերջինս ունի Ծիորիին նվիրված բլոգ, որը դիզայնով շատ նման է Ծիորիի սեփական բլոգին: Տեսնելով Այումիի անկեղծ նվիրվածությունը՝ Ծիորին տարօրինակ կերպով

տարվում է նրանով, բայց վստահ չէ, որ դա սեր է: Ի վերջո, Շիրին այցելում է Կավաշիմայի բնակարան և, խորությամբ տեսնելով վերջինիս եսասիրությունը, փրկում է Այումիին և նրա հետ միասին ծեծում Կավաշիմային: Երկու աղջիկների միջև հարաբերություն է սկսվում, բայց դա ոչ ընկերություն է, ոչ էլ սիրավեպ: Իրար նկատմամբ տածած զգացմունքները վեր են տարիքից, սեռից և ամեն ինչից: Նույնիսկ երբ Այումիի մայրը գալիս և տանում է վերջինիս, նրանք շարունակում են սեր խոստովանել միմյանց սմարթֆոնի չաթ էփի միջոցով: Բայց հետո Այումիի մայրը նրա ձեռքից վերցնում է այֆոնը, որից հետո նրանք կորցնում են հաղորդակցվելու բոլոր միջոցները: